



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Դաշտի միջնակարգ դպրոց
Ճաղկի փ. 30
հեռ. 099 99 44 44
dasht10@mail.ru
15 օգոստոս, 2023թ.
N 80

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Հովհաննիսյան

Տեղեկացնում եմք Ձեզ, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 18-ի N 22-Ն հրամանով «Դաշտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ առաջացել է ֆիզիկայի, տեխնոլոգիայի (տղաներ, աղջիկներ), երաժշտության, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի թափուր տեղեր:

Տնօրեն՝



Ս. Սահակյան

2023 թվականի օգոստոսի «15»

Խոյ համայնք, Դաշտ բնակավայր

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի խոյ համայնքի «Դաշտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի, տեխնոլոգիայի (տղաներ, աղջիկներ), երաժշտության, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմումի (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձեւ 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի

28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը՝ 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ.՝ օգոստոսի 30-ին, ժամը 14:30-ին, Դաշտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Դաշտ, Ծաղկի փողոց 30:

Տեղեկությունների համար զանգահարել՝099-93-44-44 հեռախոսահամարով: